

## Լիլիթ ԼՈԲՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

### ԷԴԳԱՐ ՊՈՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆԱՌԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԲՈՂԼԵՐԻՑ ԱՌԱՋ ԵՎ ԲՈՂԼԵՐԻՑ ՀԵՏՈ)

Տվյալ հոդվածը ուսումնասիրում է ամերիկացի գրող Էդգար Պոյի ստեղծագործության ազդեցության և արտացոլման խնդիրը ֆրանսիական գրականության մեջ՝ Ծարլ Բողլերից առաջ և նրանից հետո: Է. Պոյի անունը երկար տարիներ գրեթե մոռացված էր իր հայրենիքում, և միայն Բողլերի ու նրա սերնդակիցների շնորհիվ այն երկրորդ կյանք ստացավ սկզբից Ֆրանսիայում, այնուհետև ամբողջ Եվրոպայում ու Ամերիկայում: Հոդվածում քննության է առնվում այդ ազդեցության դիմամիլկան, դրա օրինաչափություններն ու յուրահատկությունները ֆրանսիացի գրողների ստեղծագործություններում, ինչպես նաև տեսական ու քննադատական աշխատանքներում՝ սկսած նախասիմվոլիստական շրջանից մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը:

**Բանափառն.** «ֆրանսիական» Պո, Բողլեր, միջմշակուրային կապեր, ինտելեկտուալ առաջնորդ, գեղագիտական հայացքներ, արձակ բանաստեղծություն, բարգմանություններ և մեկնարանություններ

Էդգար Պոյի ստեղծագործությանը նվիրված են շատ ուսումնասիրություններ ինչպես Ամերիկայում, այնպես էլ Եվրոպայում: Սակայն գրեթե բոլորը ուշադրություն են դարձնում այն զարմանալի հանգամանքի վրա, որ գրողի հայրենակիցները բավական երկար ժամանակ նրա մահից հետո շատ քիչ էին անդրադարձնում նրա գրական ժառանգությանը և ոչ այնքան բարձր էին գնահատում այն:

Իրավիճակը փոխվեց՝ սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից, երբ անզլալեզու ուսումնասիրությունները հաջորդեցին մեկը մյուսին: Մեծ հետաքրքրությունը Պոյի անձի ու ստեղծագործության հանդեպ չի բուլացել մինչև օրս: Դեռևս 1972 թվականին Դանիել Հոֆմանը Էդգար Պոյի մասին իր առաջարանում գրում է. «Եվ մեկ գիրք Պոյի մասին: Հարկավո՞ր է արդյոք այն» /Hoffman, 1972: 7/:Պատասխանելով իր առաջադրած հարցին՝ գրականագետը փորձում է հիմնավորել դա՝ հիմնական շեշտը դմելով ընթերցողական ընկալման վրա: Հենց ընթերցողական հետաքրքրությունն է, որ հայացքների և զնահատականների աննախանեպ բազմազանությամբ, «ճշմարիտ Պոյին» անվերջ որոնելու ձգուունվ պայամնավորում գրողին նվիրված նորանոր հետազոտությունների ասպարեզ գալը: Սակայն այդ հեղինակի կերպարի ժամանակակից քննությունների հիմնական աղբյուրները պետք է փնտրել ոչ թե Ամերիկայում, այլ առաջին հերթին Ֆրանսիայում: Այն լայն արձագանքը, որ գտավ Էդգար Պոյի ստեղծագործությունը այդ երկրում, հետազում տարածվեց ամբողջ Եվրոպայով և հետո նոր հասակ Ամերիկա: Այս առումով զարմանալի չէ, որ Պոյի ստեղծագործության վերլուծությանը նվիրված ամերիկացի ամենահայտնի գրականագետներից մեկի՝ Պատրիք Քվինի հիմնական հետա-

գրտությունը վերնագրված է «Էղգար Պոյի ֆրանսիական դեմքը» (1957) /Quinn, 1957: 18-20/: Այս ուսումնասիրության մեջ Քվինը հիմնական շեշտը դրել է Բողլերի թարգմանությունների վրա: Ինչ վերաբերում է բուն ֆրանսիացի հետազոտողներին, ամենաաշքի ընկանող ուսումնասիրությունը Ռոժե Ֆորկլացի «Էղգար Պոյի աշխարհը» (1974) /Forclaz, Roger, 1974: 49/ մենագրությունն է, որը հեղինակը, անդրադառնալով ֆրանսիական գրաքննադատության մեջ ստեղծված Պոյի կերպարին, փորձում է «կոտրել» ձևավորված որոշ կարծրատիպեր և ներկայացնել այդ հեղինակի վերաբերյալ սեփական ընկալումը: Արդյունքում Ֆորկլացը ինքն էլ ականա դառնում է «ֆրանսիական Պոյի» կերպարի ստեղծողներից մեկը: Նույնը կարելի է ասել Կլոդ Ռիշարի «Էղգար Պոյի քննադատական միտքը» աշխատության մասին, որը հետազոտողը, քննադատության ենթարկելով իր նախորդներին, տալիս է «Ազրավը» բանաստեղծության գեղարվեստական կառուցվածի փիլիսոփայության սեփական վերլուծությունը: Սակայն սրա հետ միասին պետք է փաստել, որ մինչ օրս չի ստեղծվել որևէ հատուկ ամփոփ ուսումնասիրություն՝ նվիրված ֆրանսիական մշակույթի մեջ Էղգար Պոյի ընկալման բոլոր ասպեկտներին հավասարաշափ:

Հայտնի է, որ միջմշակութային կապերի հետազոտությունը այսօր ամենապահանջված ուղղություններից մեկն է ժամանակակից գիտության, այդ թվում նաև գրականագիտության մեջ: Այս առումով կարևորվում են Էղգար Պոյի կերպարն ու ստեղծագործության ընկալման էվոլուցիան Բողլերից առաջ և Բողլերից հետո:

Առաջիններց մեկը, ով Ֆրանսիայում անդրադարձավ Էղգար Պոյի ստեղծագործությանը, Թեոֆիլ Գոտյեն էր: Պոյի և Գոտյեի միջև կան բազմաթիվ ընդհանրություններ ինչպես նրանց ստեղծագործական ճակատագրերի, այնպես էլ նրանց գեղարվեստական աշխարհների միջև: Նրանք երկուսն էլ «արվեստը արվեստի համար» հայտնի սկզբունքի կողմնակիցներ են: Երկու գրողներն էլ առանձնահատուկ տեղ են գրավում ոռմանտիզմի պատմության մեջ՝ տարբերվելով գրողի և նրա ստեղծագործության ոռմանտիկական կանոնից: Երկուսի մոտ էլ ակնհայտ են ռացիոնալիզմը և յուրահատուկ «նյութապաշտությունը» անգամ ֆանտաստիկ տեսարանների նկարագրության մեջ: Երկու հեղինակներին էլ ընդունված է համարել «խենթեր» գեղագիտական ոլորտում: Ինչպես Պոյի, այնպես էլ Գոտյեի միակ նպատակը գեղեցիկին ծառայելն է, ինչի պատճառով նրանք երկուսն էլ մերժում էին արվեստի օգտակարության գաղափարը: Բայց դրա հետ մեկտեղ նրանք երկուսն էլ աշխատակցում էին գրական ամսագրերում և տարբեր պարբերականներում հրատարակում ինչպես իրենց հոդվածները, այնպես էլ գեղարվեստական ստեղծագործությունները: Անհայտ է նաև զարմանալի նմանությունը Պոյի և Գոտյեի նովելների թեմաների միջև՝ մահ, դիակներ, մումիաներ, հոգեփոխություն, երկվություն, դիմակ, հայելի, խելագարություն: Այս թեմաների մեծ մասը բնորոշ է ոռմանտիզմին: Երկու գրողներն էլ այնպես են կիրառում ոռմանտիկական սկզբունքները և միջոցները, որ ընթերցողները մշտապես գտնվում են լարված սպասումների մեջ: Էղգար Պոյի «Էֆեկտների»

տեսությունը ենթադրում է ուժեղ ազդեցություն ընթերցող հասարակության վրա, թեև սիմվոլիստ գրողները փորձում էին դրան այլ մեկնություններ տալ: Միևնույն ժամանակ Թիոֆիլ Գոտյեն «արվեստը արվեստի համար» իր ստեղծած հայտնի մասնիքնեստում առաջ է քաշում նաև արվեստի բարոյական օգուտի խնդիրը: Այսպիսով՝ և Պոճ, և Գոտյեն հանդես են գալիս հօգուտ «մաքուր» գեղագիտության, սակայն միևնույն ժամանակ ձգուում էին իրենց կողմը գրավել ընթերցողների լայն շրջանակներ: Եվ, վերջապես, այս երկու գրողները քույլ են տալիս առաջին հերին հասկանալ ու ոչ միայն և ոչ այնքան ոռնանտիզմի ազգային, որքան գեղագիտական տարբերակների բազմադիմությունը: Եվ երկրորդը՝ նրանցից յուրաքանչյուրը յուրովի փորձում էր վերջ դնել գրականության և արվեստի երկնյուղավորմանը՝ ընդհանուր եզրեր փնտրելով «Էլիտար» և «զանգվածային» գրականության միջև:

Ֆրանսիայում ամերիկացի գրողի անվան և ստեղծագործության տարածման գործում ամենից մեծ դերը խաղացին Բողերը, Մալարմեն և Վերլենը: Ֆրանսիացի այս երեք հեղինակների համար էլ հետաքրքրությունը անգլերենի և անգլալեզու գրականության հանդեպ սերտորեն կապված է Պոյի անվան հետ: Էղդար Պոյի ազդեցությունը այս հեղինակների (իսկ նրանց միջոցով նաև հետագա մի քանի սերնդի ֆրասիացի գրողների) վրա նկատվում է ինչպես նրանց չափածու և արձակ գործերի, այնպես էլ գրական հայացքների վրա, ինչն իր արտացոլումն է գտել նրանց տեսական ու քննադատական աշխատանքներում, նրանց օրագրերում և նամակագրության մեջ: Բողերն իր առջև նպատակ էր դրել ամեն գնով փառավորել Պոյի անունը Ֆրանսիայում: Այդ նպատակն իրագործելու համար գրողը խորացնում է իր գիտելիքները անգլերենի մեջ և ստանձնում Պոյի պատմվածքների բարգմանությունը: Մանրիկացի գրողի ստեղծագործության հետ ծանոթացնում եղավ այն ժամանակ, երբ Բողերը արդեն գրել էր «Զարի ծաղիկներ» ժողովածուի մեջ մտնող բանաստեղծությունների մեծ մասը, սակայն դեռ չէր հրատարակել այդ ժողովածուն: Աևագրերի վերլուծությունը քույլ է տալիս եզրակացնելու, որ այդ բանաստեղծությունների վերջնական մշակումը կատարվել է արդեն Պոյի ազդեցությամբ: Մինչ օրս վիճահարույց է մնում այն հարցը, թե արդյոք Բողերի՝ արձակ բանաստեղծության ժամանակակից անդրադարձը, նույնպես՝ եղել է Պոյի ազդեցությամբ:

Ստեֆան Մալարմեն բարգամանում է Պոյի բանաստեղծությունները արձակով, սակայն մինչ այդ ժողովածուին անցնելը նա ստեղծում է առանձին փոքրիկ արձակ գործեր Պոյի ոգով և ոճով: Մալարմեն ստեղծագործությունների յուրահատուկ շարահյուսությունը հաճախ կապում են անգլերենի ազդեցության հետ: Իսկ Վերլենի ստեղծագործության մեջ Պոյի ազդեցությունը ակնհայտ է առաջին հերթին նրա արձակ մանրապատումներում: Ինչ վերաբերում է գրական քննադատությանը, Պոճ այստեղ հանդես է գալիս ոչ միայն որպես ուսունասիրնան օբյեկտ, այլև որպես «բարնված» համահեղինակ, քանի որ Բողերի և Վերլենի որոշ հոդվածներ իրենց մեջ պարունակում են Պոյի որոշ մտքերը՝ փոքր-ինչ ձևափոխված: Բողերը ամեն կերպ ձգտում է

ներկայացնել Պոյիմ՝ որպես օրինակելի, իդեալական, «քացարձակ» պոետ։ Պոն Բողլերի համար ժամանակակից է, խորն է, դեմոնական է և դժբախտ։

Դժբախտ ճակատագիրը թերևս այն իհմնական գործոնն է, որը միավորում էր Բողլերին, Վերլենին և Էդգար Պոյին, և որը ստիպեց ֆրանսիացի գրողներին իրենց ուշադրությունը ուղղել Պոյի ստեղծագործության վրա։ 1884 թվականին Վերլենը հրատարակեց «Անհծված պոետները» ակնարկների շարքը, ուր տեղ էին գտել իր ժամանակակիցների (Ունբո, Մալարմե, Լիլ-Ադան) հոգեբանական և ստեղծագործական դիմանկարները։ Այդ շարքը ավարտվում է «Խեղձ Լելիան» ակնարկով, որտեղ բանաստեղծը պարզ ավարտվում է, որ Լելիանը հենց ինքը՝ հեղինակն է։

Ավելի վաղ՝ 1856 թվականին, Բողլերը գրում է «Էդգար Պո» հոդվածը, որտեղ շարադրելով և վերլուծելով ամերիկացի գրողի կենսագրական փաստերը զուգահեռաբար ներկայացնում է սեփական ճակատագրի դժվարին պահերը։

Վերլենի և Պոյի միջև կան մի շարք զուգահեռներ ինչպես նրանց գեղարվեստական, այնպես էլ ընդհանուր մարդկային հայացքներում։ Վերլենը, ինչպես և Պոն, տանել չեր կարող քաղքենիությունը, թեև երկու պոետներն էլ հրաշալի գիտակցում էին, որ իրական աշխարհում հաղորդ է միջակությունը։ Ուշագրավ է Վերլենի և Պոյի կյանքի հաճագամանքների նմանությունը։ Պոն ամուսնացած էր պատանի Վիրջինիայի հետ, որին նա կորցրեց վերջինիս վաղաժամ մահվան պատճառով։ Վերլենը նույնպես ամուսնացավ շատ երիտասարդ Մարիլենի հետ՝ հույս ունենալով, որ դա կփոխի իր կյանքը, սակայն այս ամուսնությունը նույնպես միայն դժբախտություն բերեց բանաստեղծին։

Ստեղծագործական առումով նմանությունը այս երկու պոետների միջև այն է, որ Վերլենը, ինչպես և Պոն, իր ուշ քնարերգության մեջ հրաժարվում է դասական տաղաչափությունից և փորձարարություններ է անում բանաստեղծական չափերով։

Ուսումնասիրության տվյալ մոտեցումը բացատրվում է նրանով, որ Բողլերը առաջիններից էր, ով սկիզբ դրեց Պոյի անհատականությանը և նրա ստեղծագործության ուսումնասիրության «վերածննդին»։ Ինքը՝ Բողլերը, լինելով մեծ գրող, առանցքային դերակատարություն ունեցավ՝ իր հանճարեղ նախորդի՝ Էդգար Պոյի ստեղծագործության հանդեպ աննախարեալ հետաքրքրություն առաջացնելով Ֆրանսիայում և, վերջին հաշվով, նաև ամբողջ աշխարհում։ Այս տեսակետից օրինաչափ է հետևել, թե ինչպիսի զարգացումներ են եղել՝ կապված Պոյի ստեղծագործության ուսումնասիրության հետ Բողլերից առաջ, և ինչպիսի զարգացումներ են ստացել դրանք Բողլերից հետո։ Առաջին հերթին անհրաժեշտ է պատկերացում ստեղծել ամերիկացի գրողի կերպարին՝ որպես մշակութային երևոյթ, ինչպես նաև բացահայտել միջնշակութային անդրադարձների նախադրյալները։ Արա համար իր հերթին պետք է քննել Պոյի տեքստերի բարգմանությունները և մեկնությունները սկզբնական փուլում՝ մինչև Բողլերը, երբ Պոն շատերի կողմից ընկալվում էր միայն որպես դետեկտիվ պատմվածքների հեղինակ։ Անհրաժեշտ

է նաև քննել Էղգար Պոյի կերպարի մեկնությունը այն ֆրանսիացի գրողների մոտ, ովքեր բացահայտորեն ընդունում էին նրա մեծ ազդեցությունը:

Ֆրանսիայում Էղգար Պոյի կենսագրության և ստեղծագործության որդեգրման և արտացոլման հիմնական միտումը կարելի է քննորոշել որպես Պոյի կերպարի միֆականացում: Ամերիկացի գրողի մասին ֆրանսիական իրականության մեջ ստեղծված լեգենդը ներառում է բազմաթիվ, հաճախ հակասական քննութագրեր՝ բանաստեղծ-մարտիրոս, մերժված և չհասկացված հանճար, մեծ մերսավոր, հանճարեղ խելազար, անբասիր տրամաբանող և խոսքի վարպետ, ֆրանսիացի գրողների ուսուցիչ և ոգեշնչող, պարողոգիկ անհատականություն: Այս բոլոր գնահատականները գտնում ենք ոչ միայն քննադատների և կենսագիրների, այլև 19-20-րդ դարերի ֆրանսիացի գրողների մոտ: Վերլուծելով Էղգար Պոյի քնօրինակ երկերի մեկնությունների առանձնահատկությունը, անհրաժեշտության դեպքում կապացելով կենսագրական փաստերը՝ հնարավորություն է ստեղծվում պատկերացում կազմելու Ֆրանսիայում Էղգար Պոյի կերպարի էվոլյուցիայի մասին:

Էղգար Պոյի անհատականության և ստեղծագործության գնահատականների հակասականությունը բացարձություն է առաջին հերթին այն բանով, որ ֆրանսիացի քննադատների մի մասը դիտում է նրան որպես ոռնանսիկական կերպար և Ելիտար գրող, իսկ մյուս մասը՝ որպես պարողոգիկ ու խենք, մարզինալ գրող: Այս հակասական մոտեցումների «ոսկե միջինը» գտնելու համար անհրաժեշտ է քննել հեղինակի կերպարի միֆականացման պատճառներն ու հիմքերը: Սրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հստակ սահմանագծել Պո գրողի և անհատականության՝ իր տեքստերի մեջ «ներկայացված լինելու» տարրեր շերտերը: Հեղինակի կերպարը տվյալ դեպքում ունի սինթետիկ բնույթ և ներառում է այս հասկացության բոլոր հիմնական կողմները՝ հեղինակ-ստեղծող, հեղինակ, ում կենսագրությունը կրում է ստեղծագործության վերլուծության համար կարևոր տեղեկատվություն, հեղինակ՝ որպես բարդ ու խճակած անհատականություն, հեղինակ, ով հակում ունի դեպի փիլիսոփայական «թաքնված» ենթատեքստը: Էղգար Պոն այն հեղինակներից է, ում «ներկայությունը» տեքստում գրեթե միշտ ակնհայտ է: Ընթերցողի գիտակցության մեջ «հեղինակի կերպար» հասկացությունը ձևավորվում է ոչ միայն նրա ստեղծագործությունների, այև նրա կենսագրության հետ ծանոթացման հիման վրա: Ֆրանսիական մշակույթի մեջ Պոյի ընկալման պարագայում նման մոտեցումը բերես ամենաարդյունավետն է. ընթերցողների դերում են հայտնվում Պոյի ստեղծագործությունների բարգմանիները և մեկնաբանները, ովքեր ստեղծում են հեղինակի ընդհանուր կերպարը ազգային մշակույթի շրջանակներում: Տեքստ-ընթերցող փոխհարաբերությունը տվյալ դեպքում ունի փոխադարձ ազդեցության բնույթ, քանի որ գրական տեքստի ընկալումը ընթերցողի կողմից ունի նաև «հետադարձ կապ», որն իր հերթին ազդում է ստեղծագործության վրա՝ բնորոշելով դրա ընկալման կոնկրետ պատմական բնույթը: Այսպիսով՝ հեղինակի կերպարի միֆականացումը տեղի է ունենում նաև ընթերցողների շնորհիվ: Ճիշտ է, միֆականացում՝ կոլեկտիվ գիտակցության միջոցով, իսկ «գիտավոր»

ընթերցողները և մեկնաբանները տվյալ դեպքում հենց իրենք՝ թարգմանիչներն են՝ ֆրանսիական գրական աշխարհի ականավոր դեմքները (Բողեք, Մալարմե, Բրետոն), առանձին անհատականություններ, սակայն նրանց միջոցով այդ մեկնությունները և մոտեցումները դուրս են գալիս մի նոր մակարդակի վրա, երբ ընդհանուր ֆրանսիական «մշակութային տարածքում» հնարավոր է դառնում գրողի միֆականացման կերպարի ամփոփումը: Հետևելով նշված մեկնաբանների քննադատական աշխատանքներում հեղինակային կերպարի գարգացումը՝ մենք փաստորեն տեսնում ենք նաև Պոյի կենասգրության, նրա բուն անհատականության և նրա ստեղծագործության մոտիվների՝ միփխրիդանիշի վերածվելու գործընթացը: Տվյալ դեպքում նույնական կերպարի միֆականացումը բխում է արխայիկ միֆի գործառույթից՝ մոդելի, օրինակի, նմուշի ստեղծում: Նման նմուշ ֆրանսիական մշակույթի մեջ դարձավ Էդգար Պոյի կերպարը, որի հիմքը դրեցին Բողեքն ու Մալարմեն՝ որպես օրինակ Ֆրանսիայի հետագա սերնդի քննադատների, գրողների և կենսագիրների համար: Վերջիններս կարող էին ինչպես համաձայնել իրենց նախորդների մոտեցումների հետ, այնպես էլ հերքել դրանք, բայց իրենք էլ, հիմնավորելով սեփական տեսակետը, շարունակեցին զարգացնել այդ կերպարը՝ ստեղծելով «ֆրանսիական Պոյի» սեփական խորհրդանիշն ու միֆը:

Ֆրանսիական մշակույթի հաջորդ շրջանի համար Էդգար Պոյի անոնքը դարձավ «ուրիշ արվեստի» խորհրդանիշ: Այս առումով նա գրավեց ավանդարդաստների ուշադրությունը՝ սյուրուալիստ Անդրե Բրետոն, հետստրուկտուրալիստ Ռոլանդ Բարտ և այլք: Մյուս կողմից Պոյի արվեստը «լրւծվում» է զանգվածային մշակույթի մեջ նրա արձակ գործերի հիման վրա ստեղծված բազմաթիվ ֆիլմերի ստեղծման միջոցով:

Էդգար Պոյի կերպարի միֆականացմանը նպաստեցին նաև նրա կենասգրության բազմաթիվ փաստերը, որոնց լեյտմոտիվը եղել և մնում են անորոշությունը, հակասականությունը: Ամեն ինչ Էդգար Պոյի ճակատագրի մեջ ստեղծում էր հանելուկի և սկանդալի, աղմկու վիճաբանությունների և խառնակ ասեկունների մքննորոտ: Այդ փաստերի արտացոլումը գտնում ենք դեռևս Պոյի ստեղծագործությունների ֆրանսերենով առաջին թարգմանիչների մեկնություններում, ինչպես նաև ֆրանսիական քննադատության մեջ նրա անհատականությանն ու ստեղծագործությանը վերաբերող առաջին վերլուծություններում (1845-1857): Սա սկզբնական յուրացման շրջան է, որին քննական կերպով բնորոշ է յուրացվող նյութի տարածման, մասսայականացման ձգտումը (Է. Ֆորգ, Ի. Սենյե, Լ. դը Վելի, Ու. Գյուգ, Ա. Բորգեր): Առաջին թարգմանությունները (Ֆորգ), իրենց բոլոր թերություններով հանդերձ, բացահայտեցին ֆրանսիացի ընթերցասերների համար մի նոր յուրատիպ հեղինակի: Մադամ Մենյեն նրան ծանոթացրեց լայն հասարակությանը, Բորգերը հրատարակեց առաջին ժողովածուն, Գյուգը ավարտեց Բողեքի աշխատանքը՝ թարգմանելով այն ամենը, ինչ չէր թարգմանել Բողեքը: Ֆրանսիական հասարակության հետաքրքրությունը հիմնականում կենտրոնացած էր Պոյի պատմվածքների վրա, մինչ 1872 թվականին «Արվեստի և գրականության վերածնունդը» ամսագրում Ստեֆան Մալարմեն շիրա-

պարակեց Պոյի բանաստեղծությունների թարգմանությունը, որոնք Բողլերը հայտարարել էր չթարգմանվող: Այդ առաջին շրջանում (այսինքն՝ մինչև Բողլերը) Պոյի տեքստերը անցան զարգացման մի որոշակի ճանապարհ. սկզբից նրանք ամբողջապես հարմարեցվում էին ֆրանսիական մենթալիտետին և լեզվանատածողությանը, իսկ հետագայում սկզբունքորեն ընդգծվում էին թարգմանության ճշտություններն ու համապատասխանությունները: Արձակ ստեղծագործությունների թարգմանության համար առաջին հերթին ընտրվում էին ամենավառ դետեկտիվ և «ասրասափի» պատմվածքները: Թարգմանիչները ամեն կերպ ձգտում էին դարձնել դրանց ոճը պերճաշուր, հանդարտ, պարզ, մտահայեցական: Սակայն նրանք աստիճանաբար զայխ են այն համոզմունքի, որ այդ տեքստերը ավելի կրքոտ են ու կտրուկ, ավելի հեգինական ու մռայլ: Քայլ առ քայլ նրանք մոտենում էին Պոյի կերպարի ստեղծմանը, սակայն այդ կերպարի միֆականացումը և պաշտամունքային մակարդակի բարձրացումը կարող էր անել միայն Բողլերի պես տաղանդավոր գրողը:

Պոյի կերպարի և ստեղծագործության հետագա քննադատաբար վերահմաստավորումը հիմնականում կապված է Պ. Վալերիի, Ժ. Կարոյի, Մ. Բյուտորի, Է. Լովրիերի, Ռ. Բարտի, Ժ. Դերիդայի, Ա. Ժյուստենի անունների հետ: Նշված հեղինակներն ու գրականագետները տարբեր մոտեցումներ են ցուցաբերում այդ վերահմաստավորման գործում: Դրանցից մի քանիսը (Պ. Վալերի, Ժ. Ռուալը, Ժ. Կարո) հիմնական ուշադրությունը քննում են հեղինակաստեղծողի ասպեկտի վրա՝ շեշտադրելով Էղգար Պոյի՝ որպես հանճարեղ գրողի, գեղարվեստական վարպետությունը, ով իր ստեղծագործությունները կառուցում է մաքենատիկական ճշգրտությամբ: Հետազոտողների այս խումբը այն կարծիքն է արտահայտում, որ Պոն ստեղծում է «սեղմված», խիտ սյուժեներ, որոնք սպասում են իրենց հետագա մշակմանը և զարգացմանը, և որոնք «քեղմնավորում» են ստեղծագործական գիտակցությունը:

Մի շարք այլ հետազոտողներ (Մ. Բյուտոր, Ժ. Պելադան, Ա. Ժյուստեն) իրենց ուշադրությունը ուղղում են Պոյի՝ որպես կենսագրական հեղինակի վրա, ով մի կողմից հենվում է կենսագրական տեղեկությունների, մյուս կողմից՝ «քաքնված» ենթատեքստային իմաստի վրա: Այս դիտանկյունից մոտենալով Պոյին՝ նրանք ստեղծում են գրողի վեհ-ռոմանտիկական և միստիկական կերպարը:

Պոյի նկատմամբ նույն մոտեցումն ունեն հոգեվերլուծական մոտեցման կողմնակիցները (Է. Լովրիեր, Մ. Բոնապարտ, Ռ. Ասելինո), ովքեր վերոնշվածի հետ մեկտեղ շեշտադրում են նաև Պոյի հանճարի պարողոգիկ լինելը:

Պոյի տեքստերի «հանելուկայնությունը» և կառուցվածքային առանձնահատկությունները մեծապես գրավել են ստրուկտորալիզմի և հետասրուկտորալիզմի գրողներին, կողմնակիցներին (Ռ. Բարտ, Ժ. Դերիդա, Ա. Լիի): Նշված հեղինակների մոտ Պոն ներկայանում է մի կողմից որպես արատավոր մռայլ հանճար, մյուս կողմից՝ որպես հալածյալ և կիսասուրք, մարդկանց և Աստծո միջև միջնորդ: Քայլ բոլոր այս տարբեր խմբերի հետազոտողները համակարծիք են այն բանում, որ Էղգար Պոն հոգևոր և

ինտելեկտուալ առաջնորդ է, գրող, ով Աստծո կողմից օժտված է հստակ քանականությամբ և հրաշալի տրամաբանությամբ:

Առանձնահատուկ արժե հիշատակել այն հեղինակներին, ովքեր բացահայտ խոստովանում են Պոյի մեծ ազդեցությունը իրենց ստեղծագործության վրա, ինչպես նաև այն գրականագետների գործերի վրա, ովքեր ուսումնասիրում են Պոյի ազդեցությունը ֆրանսիական արձակի տարրեր ժանրերի վրա: Այսպես, Վիկոնդ դը Լիլը համարում էր Պոյին իր ուսուցիչը մարդկային հոգեբանության և սարսափելի հոգեբանության բնագավառում: Ժ.-Կ. Գյուինսմանը և նրա հետ մեկտեղ դեկադենտները ընկալում էին Պոյին՝ որպես «ներոգների ուսուցիչ», որպես գրողի, ով «խոր և տագնապալի թեմաներով» ցնում է մարդկային հոգին:

Նատուրալիստ գրողները ցուցադրաբար ընդգծում էին իրենց տարրերությունը Պոյի ստեղծագործական ոճի հետ, սակայն միաժամանակ հիմնային էին նրանով, զնահատում էին մարմնականի նկարագրման նրա վարպետությունը: Մանրակարկիտ Վերլուծության դեպքում մենք նատուրալիստների ստեղծագործության մեջ, անշուշտ, կարող ենք գտնել գծեր, որոնք կվկայեին Պոյի ազդեցության մասին:

Սյուրբեալիստները ընկալում էին Պոյին ոչ թե որպես ուսուցիչ, այլ որպես «գործընկեր»: Նրանք ուշադրություն էին հրավիրում սև հումորին, ինչպես նաև պարադքսայնության և սարկազմի առկայությանը Պոյի ստեղծագործության մեջ, ինչը հաճախ չէին նկատում քննադատները և այլ գրողները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Forclaz R. Le monde d'Edgar Poe. Berne: Lang, 1974.
2. Hoffman D. Poe Poe Poe Poe Poe Poe. Garden City, NY: Doubleday, 1972.
3. Quinn P. The French Face of Edgar Allan Poe. Carbondale, IL: Southern Illinois UP, 1957.

**Л. ЛОБЯН – Эдгар По во французской литературе до и после Бодлера.** – Данная статья исследует влияние и рецепцию творчества американского писателя Эдгара По во французской литературе до и после Бодлера. Имя Эдгара По долгие годы было почти забыто на родине писателя, и только благодаря Бодлеру и его современникам оно обрело второе рождение: вначале во Франции, а позже – в Европе и Америке. В статье прослеживается динамика этого влияния, его особенности и закономерности в произведениях французских писателей, а также в их теоретических и критических работах, начиная с досимволистского периода второй половины 20-го века.

**Ключевые слова:** «французский» По, Бодлер, межкультурные связи, интеллектуальный лидер, эстетические взгляды, стихотворение в прозе, переводы и комментарии

**L. LOBYAN – *Edgar Poe in French Literature and Criticism before and after Bodler.*** – This paper deals with the problem of influence and reception of literary work of American writer Edgar Poe in the French literature before Baudelaire and after him. The name of Edgar Poe was many years almost forgotten in his homeland, and only in virtue of Baudelaire and his contemporaries it found its second birth: at first in France, and later – in Europe and America. In this paper the dynamic of that influence is followed, its peculiarities and conformities to laws in the works of French writers, as well as in their theoretical and critical works – from pre-symbolistic period to the second half of the 20<sup>th</sup> century.

**Key words:** “French” Poe, Baudelaire, intercultural relations, intellectual leader, aesthetic views, poem in prose, translations and comments